

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՄԵԼԹ ՄԵԹԱԼ ՍՊԸ-ն ԵԹ-ԷԱՃԱՊՁԲ-22/332 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	<<ՄԵԼԹ ՄԵԹԱԼ>> ՍՊԸ	<p>Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի կարիքների համար պետք է տրամադրվեն և փողոցներում տեղադրվեն 58 /հիսունութ/ հատ աղբաման: Աղբամանները պետք է լինեն համաձայն կից ներկայացվող լուսանկարի, ստորև ներկայացվում է լուսանկարը: Աղբամանների գույները, և այլ մանրամասներ համաձայնեցնել պատվիրատուի հետ: Աղբամանները պետք է լինեն չօգտագործված և պատրաստված լինեն նոր /չօգտագործված/ նյութերով: Աղբամանի հետ պետք է տրամադրվի մեկ հատ պահեստային դույլ: Օգտագործած բոլոր նյութերը և սարքավորումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջներին, ինչպես նաև ապրանքների որակավորման և պարամետրային ցուցանիշներին: Աղբամանների տեղափոխումը և տեղադրումը պետք է իրականացվի մասնակցի միջոցների հաշվին: Աղբամանները պետք է տեղափոխվեն և տեղադրվեն Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի կողմից առաջարկվող տարածքում: ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ Աղբամանը պետք է պատրաստված լինի մետաղական հիմքի վրա հետևյալ չափերով. Աղբամանի ընդհանուր բարձրությունը հատակից 650 մմ: Վերևի ձագարածև հատվածի վերինմասի տրամագիծը Փ 450մմ, իսկ ձագարածև հատվածի ներքևի մասի տրամագիծը Փ320 մմ, ձագարածև հատվածի բարձրությունը 150մմ: Աղբամանի ներքևի հատվածի տրամագիծը 320մմ, բարձրությունը մինչև</p>

ձագարածև հատվածը 500մմ: Վերևի ձագարածև հատվածի վերին մասը պատրաստված է Փ16 մմ մետաղական խողովակից գլանված Փ 450 մմ տրամագծով, գլանված հատվածի ծայրերի միացումը եռակցման միջոցով է, մեկ եռակցման մասով և լավորակ մշակված: Աղբամանի պատերի 40x3 մմ մետաղական ժապավենը, առանց կտրվածքի /ամբողջական/ եռակցվում է Փ 16 մմ տրամագծով գլանված հատվածին և Փ450մմ տրամագծով ձագարածև հատվածի վերին հատվածին, պետք է միացման կետերն ու եռակցված հատվածները լինեն լավորակ մշակված, Փ320 մմտրամագծով մասում ժապավենի հեռավորությունը մեկը մյուսից 17-18 մմ: Աղբամանի ստորին հատվածը որտեղ զոդված են 40x3մմ մետաղական ժապավենը պետք է փաթաթված լինի 50x3մմ մետաղական ժապավենով ինչպես նկարում: Աղբամանի կափարիչը պետք է ամրացված լինի աղբամանին մետաղական շղթայով, իսկ աղբամանի կափարիչի անցքը Փ 150 մմ :Աղբամանի կափարիչը պետք է պատրաստված լինի 1.8-2մմ մետաղական թիթեղից և հաստությունը ապահեվելու համար աղբամանի կափարիչի արտաքին մասով պետք է փաթաթվի 20x3մմ կամ 25x3մմ մետաղական ժապավենով, իսկ կափարիչի անցքի Փ 150 մմտրամագծով պետք է փաթաթվի 10x10մմ մետաղական խողովակ եռակվման միջոցով: Աղբամանի մեջ տեղադրված է ցինկապատ մետաղական թիթեղից պատրաստված դույլ պետք է պատրաստվի 0.4-0.5 մմ հաստությամբ ցինկապատ թիթեղով, պատերին լինեն անցքերՓ 10մմ, ունենա բռնակ, վերևի հատվածը` բռնակի ամրացման մասը ուժեղացված: Աղբամանը ներկել գրունտով, այնուհետև վերջնական լավորակ ներկով: Աղբամանը ամբողջությամբ մետաղական է, բոլոր մետաղական դետալները ամրացված են եռակցման միջոցով և բոլոր եռակված մասերը պետք է լինեն հղկված: Աղբամանը ունի 3 անցք գետնին ամրացնելու համար: Աղբամանները պետք է ունենան առնվազն 1 տարվա երաշխիքային սպասարկում: Աղբամանները մատակարարվում են փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

МЕЛТ МЕТАЛ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом БР-ЕЦΔΥΠΩΡ-22/332 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
3		